ԼԻԼԻԹ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱԿՆԱՐԿ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (1945-1965 ԹԹ.)

20-րդ դարի կեսերից գիտատեխնիկական առաջադիմության բնորոշ գծերն են գիտության, տեխնիկայի, արտադրողական ուժերի և արտադրահարաբերությունների արագ զարգացումը, գիտության, արտադրության նորանոր ճյուղերի ստեղծումը, հասարակության մտավոր պոտենցիալի բուռն վերելքը և այլն: Սակայն ստալինյան ամենատիրության պայմաններում ազգային շահերի պաշտպանություն փաստորեն գոյություն չուներ: Այն հասկացվում և ներկայացվում էր այնպես, ինչպես Ստալինն էր հրամցնում: Գիտատեխնիկական առաջընթացի արգելակման պատճառ էին գիտության համար հատկացված սուղ միջոցները, հին սարքավորումները, մասնագետների բացակայությունը, «այլախոհ» գիտնականների համատարած ձերբակալությունները և աքսորը: Այս կապակցությամբ խիստ բնորոշ և իմաստալից է Ներսիկ Ստեփանյանի օրագրություններից քաղված այն արտահայտությունը, թե «պայքար է մղվում ոչ թե կապիտալիզմի, այլ ազգայինի դեմ»:[1]

Կուսակցական բյուրոկրատիան իրավապահ մարմինների հետ (ՆԳՆ, ՊԱԿ) լարված վիճակի մեջ էր պահում ժողովրդին: Գաղափարական հարկադրանքի պայմաններում գիտությունն ու մշակույթը շարունակում էին դիտվել գերազանցապես որպես կուսակցության քաղաքականությանը ծառայող բնագավառներ: Սովորաբար լայն ասպարեզ էին ստանում կուսակցության քաղաքական գծին հետևողականորեն ծառայող մասնագետները: Ամեն մի վրիպում կամ սխալ քաղաքական գնահատական էր ստանում:

Մտավորականությանը վարչական ապարատի կամակատարը դարձնելու նպատակով 1946-1948 թթ. ՀԱՄԿ/բ/Կ Կենտկոմը մի շարք որոշումներ ընդունեց գրականության և արվեստի հարցերի մասին: Դրա հետ մեկտեղ հետպատերազմյան շրջանում Կենտկոմի նախաձեռնությամբ գիտության տարբեր ճյուղերի վիճակի և հեռանկարների մասին ծավալվեցին գիտական բանավեճեր: Այս բանավեճերն առիթ ծառայեցին մեծ հեղինակություն ու վաստակ ունեցող շատ մասնագետների հետ հաշվեհարդար տեսնելու համար:

Երկրում ծավալվող գաղափարական հալածանքները դրսևորվում էին նաև հանրապետություններում: Հայաստանի Գիտությունների Ակադեմիան, պետական համալսարանը համամիութենական բանավեճերի օրինակով ճանա-

[1] Տե՛ս, ՀԱԱ,. ֆ.4033,գ.5, գ.319, էջ 5

չում գտած շատ գիտնականների (ակադեմիկոսներ՝ Հր. Աճառյան, Գր. Ղափանցյան, Մ. Ներսիսյան, Աբ. Հովհաննիսյան, պրոֆեսորներ՝ Վ.Ռշտունի, Ա.Թախտաջյան, Ա. Կեր-Պողոսյան և ուրիշներ) անհարկի մեղադրեցին օտարամոլության և այլ արատների մեջ:

Այդ ժամանակաշրջանում իրենց ընդդիմադիր հայացքներով հանդես եկան գիտության տարբեր ոլորտների ներկայացուցիչներ: Մասնավորապես Երևանի պետական համալսարանում ձևավորվել էր գաղտնի կազմակերպություն: Պատմության ֆակուլտետի մի խումբ ուսանողներ (Ռոլանդ Լիսիցյան, Ռաֆայել Ավագյան, Պարետ Վիրաբյան, Շավարշ Սմբատյան) ինքնուրույն կամ միասին մտորում և մտքերի փոխանակություն էին ունենում ուսումնական հարցերի շուրջը, որոնցում նրանք հակասություն էին տեսնում տեսության և իրականության մեջ: Այդպիսին էր ազգային հարցը, որը ԽՍՀՄ-ում համարվում էր լուծված: Սակայն այդ ինչպես է, մտածում էին նրանք, որ հայկական Լեռնային Դրաբաղը և տնտեսապես և ֆիզիկապես Հայաստանի հետ կապված Նախիջևանը գտնվում են Ադրբեջանի կազմում: Եվ ընկերները որոշում են այդ հարցի առթիվ նամակ գրել և ուղարկել Ստալինին, բայց շուտով հրաժարվում են: Խմբում առաջատար դեր կատարող Ռ.Լիսիցյանը խմբի նպատակների համար կատարել է «Դրությունը ԽՍՀՄ-ում» համառոտ շարադրանք, որը դարձյալ ներկայացնում է ԽՍՀՄ-ում խոսքի և իրականության հակասությունը: Ուժեղ քննադատված է նաև «ստալինյան սահմանադրությունը»:

Հետագայում խմբին միացան նոր համակիրներ: 1941թ. կեսերին, մատնության օգնությամբ, խումբը ձերբակալվեց: Ապա ձերբակալվածների թիվը հասավ 30-ի, որոնց զգալի մասը խմբի անդամների հետ ունեցել էին պատահական առնչություն: Նախաքննությունը գաղտնի կազմակերպության գործը բաժանեց երկու մասի, մեղադրանքների վրա ավելացնելով նաև Հայրենական պատերազմի հետ կապված մեղքեր: ԽՍՀՄ ՆԳԺԿ հատուկ խորհրդակցությունը կայացրեց որոշում. 24 տղաներից 6-ը, նաև Ռոլանդ Լիսիցյանը գնդակահարվեցին, իսկ 18-ը, բաժանված մասի մեջ մտնող 6 տղաների հետ միասին, դատապարտվեցին 10-ական տարվա ազատազրկման: 1958թ. բոլորը արդարացվեցին հանցակազմի բացակայության պատճառով, բացառությամբ Լիսիցյանի, որի վերաբերյալ որոշումը հանրապետության դատախազությունը 1955թ. համարել է ճիշտ, բայց պատժաչափը (գնդակահարություն) շատ խիստ:[2] Այսօր Ռոլանդ Լիսիցյանի հանցանքը հնչում է որպես ստալինյան կարգերի դեմ ընդդիմության փորձ կամ արտահայտություն:

---

[2] Տե՛ս,ՀԱԱՆԱ, ԿԳԲ, գ. 9260(4 հատոր): ՀԱԱ, ֆ, 571, g.4, գ.621, 622

1953թ. Ստալինի մահից և անհատի պաշտամունքի քննադատությունից հետո, խրուշչովյան «ձնհալքը» աստիճանաբար որոշակի դեմոկրատական տարրեր մտցրեց երկրի կառավարման համակարգում, ինչը դրական անդրադարձ ունեցավ նաև գիտական կյանքի վրա, սկեցին հրատարակվել նոր աշխատանքներ, վերականգնվեցին այլախոհության մեջ դատապարտված գիտնականներից շատերի բարի անունն ու համբավը:

1953թ. Ստալինի մահից և Բերիայի ձերբակալումից հետո ավարտվեց մարդկային և ազգային արժանապատվության ոտնահարման, զանգվածային բռնությունների ու գնդակահարությունների մի ամբողջ ժամանակաշրջան:

Դեռևս երկրորդ համաշխարհային պատերազմի թեժ պահին՝ 1943 թ. նոյեմբերին, Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի հիմքի վրա ստեղծվեց Հայաստանի Գիտությունների ակադեմիան, որի կազմում ստեղծվեց նաև պատմության ինստիտուտը:[3] Արդեն 1950թ. ՀԽՍՀ ԳԱ ընդգրկում էր 33 գիտահետազոտական հիմնարկ:[4] Նրա հիմնադիր անդամների կազմում էին գիտության տարբեր բնագավառների խոշոր ներկայացուցիչներ՝ ֆիզիկոսներ Աբրահամ և Արտեմ Ալիխանյանները, աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանը, ֆիզիոլոգ Լևոն Օրբելին, պատմաբան Հակոբ Մանանդյանը, լեզվաբան Հրաչյա Աճառյանը, գրականագետ Մանուկ Աբեղյանը, բանաստեղծ Ավետիք Իսահակյանը և ուրիշներ:[5] Գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ ընտրվեց արևելագետ Հովսեփ Օրբելին, որին 1947թ. փոխարինեց աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանը:

Նորաստեղծ ակադեմիան միավորեց հանրապետությունում գոյություն ունեցող գիտահետազոտական հաստատությունների զգալի մասը: Գիտությունների ակադեմիայի ստեղծումը նոր թափ հաղորդեց հիմնարար և կիրառական գիտությունների զարգացմանը:

Պատմագիտական կարևոր օջախ դարձավ նաև «Մատենադարանը», ուր հավաքվում, պահվում և ուսումնասիրվում էին գլխավորապես հայկական ձեռագրերը: Այն 1939թ. էջմիածնից տեղափոխվում է Երևան և 1958թ. Հայաստանի Կառավարության որոշմամբ վերանվանվում է ՀԽՍՀ Մինիստրների սովետին կից գիտահետազոտական ինստիտուտ՝ «Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարան» անունով:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման պատմագրությամբ զբաղվել են Աշ.Հովհաննիսյանը, Վ.Պարսամյանը, Մ.Ներսիսյանը,

---

[3] Տե՛ս, «Հայագիտությունը 50 տարում», 1-ին պրակ, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան -1971թ., էջ 6:
[4] Տե՛ս, Ս.Վ.Խարմանդարյան «Սովետական Հայաստանը 4-րդ հնգամյակի տարիներին 1946-1950թթ.» ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան -1960թ., էջ 191:
[5] ՀԱԱ,. ֆ.116,գ.1, գ.600, էջ 15:

Ծ.Աղայանը, Գ.Ղարիբջանյանը, Ս.Էլչիբեկյանը, Գ.Գալոյանը, Ս.Վարդանյանը, Ա.Հակոբյանը, Ս.Կարապետյանը, Վ.Միքայելյանը, Ս.Կարապետյանը և ուրիշներ:[6] Երևանի պետական համալսարանի գիտնականներ Հ.Մանանդյանը, Հր.Աճառյանը, Մ.Աբեղյանը, Ստ.Մալխասյանը, Լեոն (Ա.Բաբախանյան) և մյուսներն իրենց արժեքավոր հետազոտություններով հիմնադրեցին խորհրդային հայագիտությունը, հարստացնելով այն նոր տվյալներով: «Նրանց գործունեության արդյունքները, հաճախակի դուրս են գալիս հայագիտության սահմաններից»:[7] Այդ գիտնականների աշխատանքներում իրենց խոր լուսաբանումն են գտել ընդհանուր պատմության շատ հարցեր, որոնք վերաբերում են հին դարերում Մերձավոր Արևելքի և Միջերկրականի ժողովուրդների պատմությանը: Նրանք հետազոտել և ընդհանրացրել են պատմության, հնէաբանության և լեզվաբանության վերջին հարյուրամյակում կուտակած փաստական նոր նյութը, որը լույս է սփռում այդտեղ բնակվող առանձին ցեղերի ու ժողովուրդների ծագման և լեզվի առաջացման վրա: Արժեքավոր հետազոտություններով հարստացրեց պատմական գիտությունը ակադեմիկոս Հակոբ Մանանդյանը (1873-1952թթ.): Նրա աշխատանքներում ժամանակակից գիտության մակարդակի վրա առաջ են քաշվել ու լուսաբանվել հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմության բազմաթիվ կարևորագույն խնդիրներ: Գնահատելով Հ.Մանանդյանի գիտական գործունեությունը, ակադեմիկոս Բ.Գրեկովը գրել է. «Յակով Համազասպովիչի գիտական ստեղծագործության կարևոր հատկանիշն այն է, որ նրան հավասաչափ մատչելի են ինչպես լեզվի գաղտնիքները, այնպես էլ գրավոր և նյութական աղբյուրները, նա միաժամանակ և բանասեր է, և պատմաբան: Իսկ այդ հանգամանքը թույլ է տալիս նրան իր կողմից ուսումնասիրվող հեռու անցյալում տեսնել անհամեմատ ավելի շատ, քան դա մատչելի է մյուս, համամեմատաբար քիչ պատրաստված հետազոտողներին»:[8]

Նշված ժամանակաշրջանում Հայաստանում պատմագիտությունը աստիճանաբար սկսեց թոթափել ստալինյան շրջանի ծանր բեռը, ստեղծվեցին արժեքավոր գիտական աշխատություններ, որոնցում նկատելի էր առավել օբյեկտիվ, անաչառ վերլուծությունների միտումը, սկսվեց արծարծվել Հայոց ցեղասպանության թեմատիկան: Ուսումնասիրվող ժամանակաշրջանի պատմագիտական միտքը խթան հանդիսացավ հանրապետության հասարակական

---

[6] ՀԱԱ,. ֆ.116,ց.1, գ.600, էջ 17:
[7] Տե՛ս, Վ.Հ.Համարձումյան »Գիտությունը Հայաստանում 40 տարում« Երևան-1960թ., էջ6:
[8] Տե՛ս, Б.Греков, "Выдающийся советский историк", см.сборник "Дружба", т.I, Ереван, 1960, стр 171.

կյանքի հետագա զարգացումների համար և սկզբնավորեց ազգային զարթոնքը ձևավորելով ազգային վերածննդի գաղափարախոսությունը:

Միաժամանակ արագ տեմպերով սկսեցին զարգանալ գիտահետազոտական աշխատանքները: Այսպես, պատմական գիտության, մասնավորապես Հայաստանի պատմության հին ու միջնադարյան շրջանների հետագա ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեցան պեղումները, որոնք կատարում էր ԳԱ հնէաբանության ինստիտուտը Մոսկվայի ու Լենինգրադի գիտահետազոտական հնէաբանական հիմնարկների հետ մեկտեղ: Պեղումների ժամանակ Շենգավիթում, Արին-Բերդում, Գառնիում, Ամբերդում, Դվինում, Լճաշենում, Արմավիրում և մի քանի այլ վայրերում հայտնաբերված հարուստ նյութերը հնարավորություն տվեցին առաջ քաշել ու լուծել նոր գիտական խնդիրներ, որոնք վերաբերում են հայ ժողովրդի և ուրարտական պետության պատմությանը: Հայաստանի նյութական մշակույթի հուշարձանների պեղումները կազմակերպելիս մեծ է ակադեմիկոս Հ.Ս.Օրբելու ներդրումը: Այդ ուղղությամբ արժեքավոր աշխատանք կատարեցին Բ.Բ.Պիոտրովսկին, Բ.Ն.Առաքելյանը, Կ.Գ.Ղաֆադարյանը և ուրիշներ:[9]

Նշված ոլորտում քաղաքական բնույթի նկատառումներով խեղաթյուրվում էին Հայաստանի պատմության շատ էջեր, ինտերնացիոնալիզմի քողի տակ տարվում էր համահարթեցման չհիմնավորված քաղաքականություն, արդյունքում Հայաստանի պատմական-ազգային ժառանգությունը յուրացվում էր հարևան ժողովուրդների կողմից:

Լեզվաբանական գիտության համար վիթխարի արժեք էր հայ գիտնականների ավագ սերնդի ականավոր ներկայացուցիչ Հրաչյա Աճառյանի (1876-1953թթ.) գիտական ժառանգությունը: Հր.Աճառյանը խոր մտածող էր և իսկական նորարար գիտության մեջ, նա միաժամանակ լեզվաբան-գիտնականների մի ամբողջ սերնդի տաղանդավոր դաստիարակն էր: Հայագիտության ոսկե ֆոնդը մտան գիտնականի բազմաթիվ հետազոտությունները՝ երկհատորյա «Հայոց լեզվի պատմությունը», յոթ հատորյա «Հայոց լեզվի ստուգաբանական բառարանը», քառահատոր «Հատուկ անձնանունների բառարանը», «Հայոց լեզվի լիակատար քերականությունը» և բազմաթիվ այլ աշխատություններ:

Լեզվի զարգացման և հետազոտման խնդիրը, երբեմն դիտվում էր որպես ազգայնականության դրսևորում, նույնիսկ հնագույն հայերեն բառերի գործածությունը օտարածին բառերի փոխարեն համարվում էր անթույլատրելի արգելելով հայեցի խոսելաոճի և մտածողության զարգացումը:

---

[9] ՀԱԱ, ֆ.116, ց.1, գ.639, էջ1:

Փաստական նյութի հարստությամբ և գիտական վերլուծության խորությամբ աչքի են ընկնում Գրիգոր Ղափանցյանի (1888-1957թթ.) աշխատությունները, որոնք վերաբերում են մեր ժողովրդի ծագմանը և նրա լեզվի պատմությանը:

Լայն հռչակ ձեռք բերեցին հայագիտության մեծ երախտավոր Մանուկ Աբեղյանի (1865-1945թթ.) աշխատանքները: Իր բազմաթիվ հետազոտություններում նա տվել է հայ ժողովրդական բանահյուսության, լեզվի ու գրականության ծագման և զարգացման մի շարք կարևոր հարցերի սպառիչ պատասխանը:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում հիմք դրվեց խորհրդահայ քաղաքական հայագիտությանը, որը հետագայում ծլուղավորվեց ընդգրկելով քաղաքական բնույթի նոր հիմնահարցեր:

Հայ բանասիրության, Հայաստանի նյութական մշակույթի պատմության ուսումնասիրության ասպարեզում մեծ ներդրում են կատարել Թ.Թորամանյանը, Հովհ.Հակոբյանը, Խ.Սամվելյանը, Կ.Մելիք-Օհանջանյանը, Ա.Քալանթարը:

Գիտական աշխատանքների ծավալումը հնարավոր դարձավ պետության կողմից այդ նպատակին հատկացվող միջոցների հետզհետե ավելացման շնորհիվ: Այդ հանգամանքը թույլ տվեց խոշոր գումարներ տրամադրել հետազոտությունների թեմատիկան և ծավալը ընդլայնելով անհրաժեշտ գիտական սարքավորում ձեռք բերելուն, կապիտալ շինարարություն ծավալելուն:[10]

Այդ շրջանում կառուցվեցին մի քանի տասնյակ շենքեր, այդ թվում Բյուրականի աստղադիտարանի համալիրը, ԳԱ նախագահության, օրգանական և անօրգանական քիմիայի, բուսաբանության, ֆիզիոլոգիայի, ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, ֆիզիկայի, մանէաբանության, հաշվողական կենտրոնի և այլ ինստիտուտների շենքերը: Ակադեմիայի հիմնարկներն ունեին ժամանակակից այնպիսի սարքեր, որոնք հնարավոր են դարձել գիտական աշխատանքում կիրառել փորձառության նորագույն մեթոդներ: Տիեզերական ճառագայթների հետազոտության համար, օրինակ, տեղադրվեցին գիտնականների և կոնստրուկտորների պատրաստած խոշորագույն մագնիսական մասս-սպեկտրոմետրերը և ռադիոաստղադիտակները, որոնց հայելիների ընդհանուր մակերեսը 4500 քառ. մետր է և որոնք հնարավորություն են ընձեռում հետազոտելու մեզանից շատ ու շատ հեռու գտնվող երկնային մարմինների բնույթը: Աստղաբաշխության ասպարեզում հետազոտությունների համար տեղադրվե-

---

[10] Տե՛ս, Ա.Պ.Սիմոնյան »Երևան« (1920-1967թթ.), «Միտք» հրատարակչություն, Երևան - 1968թ., էջ 154:

ցին հազար լայնանկյուն օպտիկական աստղադիտակներ, օգտագործվում էին համապարփակ արագաշարժ էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ:

1961թ. մայիսին Բյուրականի աստղադիտարանում բացվեց ԽՍՀՄ-ում խոշորագույն Շմիդտի սիստեմի աստղադիտակը: Ունենալով ավտոմատ կառավարում, նոր աստղադիտակը թույլ էր տալիս լուսանկարել ցածր մակերեսային պայծառությամբ տիեզերական օբյեկտները և ստանալ աստղային երկնքի մեծ շրջանների պատկերը: Ֆիզիկայի ինստիտուտի էլեկտրոնների օղակաձև արագացուցիչն ամենաբարձր սարքավորումն էր, որ երբևէ ստեղծվել է Հայաստանում: Նրա շնորհիվ հնարավոր է դարձել մեծ չափով ընդլայնել տարրական մասնիկների ֆիզիկայի ասպարեզի հետազոտությունները:[11]

Կենսաբանության, ֆիզիոլոգիայի, մանրէաբանության, բժշկության փորձառական հետազոտություններում լայնորեն արմատավորվում են ռենտգենաբանական, կենսաքիմիական, ռադիոկենսաբանական և այլ մեթոդներ:

Նոր գիտական իմացությունը հիմք է աչքի ընկնող տեխնիկական հայտնագործությունների համար: Այսպես, եթե 1940-ական թթ. կիբեռնետիկան չէր զարգանում՝ համարվելով բուրժուական գիտություն, ապա արդեն 1953թ. մաթեմատիկայի և կիբեռնետիկայի բնագավառում կատարված հետազոտությունները ապահովեցին 1-ին էլեկտրոնային հաշվիչ մեքենայի (ԷՀՄ) երևան գալը՝ ֆիզիկայի և էլեկտրոնիկայի զարգացումը հանգեցրեց այդ մեքենաների արագ կատարելագործմանը և զարգացմանը: Դրա շնորհիվ արդեն 60-ական թթ. երկրորդ կեսին ԷՀՄ-ները դարձան գիտատեխնիկական հեղաշրջման հիմքը:

Ավտոմատակարարման ժամանակակից նվաճումները որակական նոր թռիչք նշանավորեցին տեխնիկական առաջընթացի մեջ: Դրանք հիմնավորվում են մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, էլեկտրոնիկայի և այլ գիտությունների ասպարեզներում կատարված հայտնագործությունների վրա:[12]

Գիտության և արտադրության կապերի սերտացման գործում մեծ է կամավոր գիտատեխնիկական ընկերությունների (ԳՏԸ) դերը: 1955թ. կատարվեց գիտատեխնիկական ընկերությունների կազմակերպական կառուցվածքի արմատական վերակառուցում:[13]

Հանրապետության կոմկուսի Կենտկոմի բյուրոյի նիստերում, Կենտկոմի պլենումներում, հանրապետության կուսակցական-տնտեսական ակտիվի ժողովներում, խորհրդակցություններում այդ տարիներին բազմաթիվ այլ

---

[11] ՀԱԱ, ֆ.116, ց.1, գ.674, էջ 58-59:
[12] ՀԱԱ, ֆ.1, ց.47, գ.15, էջ 76:
[13] Տե՛ս, Հ.Ռ. Սիմոնյան «Գիտատեխնիկական հեղափոխությունը և նրա սոցիալական հետևանքները» «Հայաստան» հրատարակչություն, Երևան -1982թ., էջ 176:

հարցերի շարքում առաջնակարգ տեղ են գրավել գիտատեխնիկական առաջընթացի և գիտության զարգացման հարցերը: Այս խնդիրների լուծումը, բնականաբար, ենթադրում էր նոր մտածողություն, հարցերի լուծման նկատմամբ նոր մոտեցում, շեշտը դնելով մարդկային գործոնի ակտիվացման, կառավարման, ղեկավարման դեմոկրատական սկզբունքների ընդլայնման վրա:

1960-ական թթ. հանրապետության տնտեսության մեջ սկսեցին զարգանալ գիտատեխնիկական առաջընթացը բնորոշող ճյուղեր, ստեղծվեցին գիտահետազոտական բազմաթիվ ինստիտուտներ, կոլեկտիվներ, գիտարտադրական միավորումներ, կոնստրուկտորական բյուրոներ և այլն:

Հանրապետությունում տարեցտարի ուժեղ թափ էր ստանում գիտահետազոտական աշխատանքը: ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի և գերատեսչությունների համակարգում առկա էր 79 գիտահետազոտական հիմնարկ, որտեղ 3409 գիտական աշխատողներ, այդ թվում գիտությունների 79 դոկտոր և 734 թեկնածու ստեղծագործաբար աշխատում, իրենց ավանդն էին մուծում խորհրդային գիտության և տեխնիկայի հետագա զարգացման գործում: Բազմաթիվ գիտական կադրեր զբաղված էին հանրապետության ուսումնական հաստատություններում և ձեռնարկություններում:[14]

Գիտությունների ակադեմիայի համալիրում ստեղծվել էին ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, էներգետիկայի, ջրային պրոբլեմների, միկրոբիոլոգիայի, գեոֆիզիկայի և ինժեներական սեյսմոլոգիայի, կարդիոլոգիայի և սրտային վիրաբուժության ինստիտուտներ, ինչպես նաև կազմակերպվել էին բարձրագույն ուսումնական հաստատություններին կից պրոբլեմային լաբորատորիաներ:

Բժշկական գիտության խոշոր նվաճումներից էին Հայաստանում նախահեղափոխական շրջանում տարածված սուր վարակիչ հիվանդությունների առաջացման պայմանների հետազոտումը և նրանց վերացման համար գործնական միջոցառումների մշակումը: Գիտության մեջ մեծ ներդրում են հայ բժիշկների մի շարք գիտական աշխատանքները: Համաշխարհային ճանաչում ստացավ Լ.Ա.Հովհաննիսյանի հինգհատորյա «Հայաստանի բժշկության պատմություն» ծավալուն հետազոտությունը, որտեղ հարուստ փաստերով ցույց է տրված Հայաստանում յուրօրինակ բժշկական գիտական մտքի առաջացումը և զարգացումը, վեր է հանված նրա ավելի քան երկու հազարամյա պատմությունը:

---

[14] Տե՛ս, Յա. Ն. Զարոբյան «Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմպարտիայի 22-րդ համագումարին» Հայպետհրատ, Երևան -1961թ., էջ 76:

1950թ. ՀԽՍՀ-ում կար 60 գիտահետազոտական ինստիտուտ, ինքնուրույն լաբորատորիա և սեկտոր (1940թ. 36), մոտ 2000 գիտական աշխատող, որոնցից 112-ը՝ գիտության դոկտորներ էին, իսկ 658-ը թեկնածուներ: Այդ թվից 1170-ը աշխատում էին բուհերում, իսկ 778-ը՝ գիտահետազոտական հիմնարկներում:[15] Խորհրդային իշխանության տարիներին Հայաստանն ապրել է նկատելի վերելք, դառնալով զարգացած արդյունաբերության ու գյուղատնտեսության, առաջավոր գիտության ու մշակույթի երկիր:[16]

Վերլուծելով նշված ժամանակահատվածում գիտության զարգացման հիմնախնդիրներն ու առանձնահատկությունները խորհրդային Հայաստանում կարելի է եզրակացնել, որ կուսակցական և պետական մարմինները մշտապես իրենց ուշադրության կենտրոնում պահելով գիտության զարգացման հեռանկարների կողմնորոշիչները, հասել են անվիճելի հաջողությունների իրենց խնդիրների լուծման ճանապարհին: Նրանց կողմից հաճախակի քննարկվել են այդ ոլորտում աշխատանքների վիճակը, արծարծվել դրանց հետ կապված բազմաբնույթ խնդիրները, բացահայտվել վիճելի հարցերը և գործնական օգնություն կազմակերպվել այդ ուղղությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը կարելի է միանշանակ եզրակացնել, որ չնայած գոյություն ունեցող ժամանակաշրջանին բնորոշ խոչընդոտներին, ուսումնասիրվող ժամանակահատվածում գիտության զարգացումը հիմնականում պայմանավորված է նշված ոլորտի նկատմամբ պետության մշտական հոգացությամբ:

Մեր ժամանակներում, հաշվի առնելով անցյալից մեր սերունդներին մնացած ժառանգությունը և դասեր քաղելով հետապատերազմյան ժամանակահատվածից, անհրաժեշտ է կտրուկ միջոցառումներ ձեռնարկել նշված ոլորտները ճգնաժամային վիճակից հանելու համար:

Միաժամանակ վերլուծելով ուսումնասիրվող ժամանակաշրջանը կարելի է եզրակացնել, որ 50-ական թթ.-ից գիտական միտքը դուրս եկավ հարկադրական թմբիրից՝ աստիճանաբար ծերբազատվելով ստալինյան վախի մթնոլորտից: Բացի այդ, ԽՍՀՄ-ում 1960-ական թթ. սկզբից բուռն թափով ծավալված գիտատեխնիկական առաջընթացն ապահովող գործընթացները բնութագրական էին ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների համար, մեզանում ունեին դրսևորման իրենց առանձնահատկությունները՝ առաջադրելով ինքնատիպ մոտեցումներ մեր գիտնականներին: Առաջին հերթին՝ Հայաստանը ազգային

---

[15] Ս.Վ.Խարմանդարյան «Սովետական Հայաստանը 4-րդ հնգամյակի տարիներին 1946-1950թթ.» ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան -1960թ., էջ 190:

[16] Լ.Պ.Ղարիբջանյան «Երևանի պետական համալսարանը 1920-1930թթ.» Երևան -1965թ., «Միտք» հրատարակչություն, էջ 5:

կազմով ամենամիատարր հանրապետություններից մեկն էր, որտեղ դեմոգրաֆիական, միգրացիոն և սոցիալական գործընթացները արտացոլում էին գտնում գիտության տարբեր ճյուղերում: Բացի այդ հայ ժողովուրդը ուներ ազգային հիմնախնդիրներ՝ Հայ Դատ, կորցրած հայրենիք, ցեղասպանություն, որոնք մշտապես հուզել են մեր ժողովրդին: Եվ վերջապես՝ կարևոր իրողություն դարձավ սփյուռքահայության զանգվածային ներգաղթը, որը նոր լիցք հաղորդեց սոցիալ-տնտեսական կյանքի ոլորտներին, ինչպես նաև գիտության զարգացմանը: Այս հիմնախնդիրները առանձնահատուկ ուղղվածություն և միտումներ էին հաղորդում գիտության զարգացմանը:

Չնայած այն հանգամանքին, որ որ գիտության զարգացման ասպարեզում գաղափարախոսությանը մեծ դերակատարում վերապահված չէ, այնուամենայնիվ ԽՍՀՄ ամբողջատիրական, կոմունիստական միակուսակցական վարչակարգի առկայության պայմաններում պահպանվեցին գաղափարաքաղաքական այն սահմանափակումները, որոնք գիտության մի շարք ճյուղերի զարգացումը կաղապարում էին մարքս-լենինյան տեսությամբ: Ժամանակաշրջանին բնորոշ առկա բացթողումների և թերությունների թվում կարելի է նշել նաև, որ տնտեսության և հասարակության զարգացումը խարսխվում էր սոցիալիզմի առավելությունների բացարձակացման անիրատես գաղափարի վրա: Այս հանգամանքների պատճառով գիտական մտքի ձեռք բերումները չդարձան իրատեսական, գիտականորեն հիմնավորված փաստարկներ, որոնք կապահովեին հասարակության ներդաշնակ առաջընթացը՝ զերծ ցնցումներից և լճացումներից: Այնուամենայնիվ քննարկվող ժամանակահատվածում մեր հանրապետությունում լուրջ նվաճումներ արձանագրվեցին գիտության ասպարեզում, որոնք դրսևորվեցին, ինչպես գիտական հիմնարկների կազմակերպման, նրանց նյութատեխնիկական բազայի համալրման, այնպես էլ կադրերի պատրաստման ուղղությամբ: Արդյունքում ուսումնասիրվող ժամանակաշրջանի գիտական ժառանգությունը հայ գիտական մտքի նոր ուղենիշ դարձավ և ստեղծվեցին մնայուն արժեքներ սերունդների համար:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում վերլուծելով գիտական մտքի զարգացման առանձնահատկությունները Խորհրդային Հայաստանում, կարելի եզրակացնել, որ պետությունը, չնայած գրաքննության և այլ միջոցներով արգելակում էր գիտության մի շարք ճյուղերի, մասնավորապես՝ պատմության, գրականության, լեզվի բազմակողմանի ուսումնասիրությունը, չէր խրախուսում նոր մտքերի արտահայտումը, սակայն նույնիսկ պետպատվերի սահմաններում վկայակոչված փաստերը և գիտական վերլուծությունները նպաստում էին ազգային գաղափարախոսության արմատավորմանը, երիտասարդության հայրենասիրական դաստիարակության միտումների խորացմանը: